

ՍՏ. ՆԱԶԱՐԹԱՆՅԸ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԱՍԻՆ

Լ Վ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Կազանում գտնվելու տարիներին (1842 – 1849 թթ.) արդեն ձևավորվել էր Ստ. Նազարյանցի աշխարհայացքը, և իր ապագա գործունեության ծրագրերի իրականացման համար նրան անհրաժեշտ էր նպաստավոր միջավայր:

1849 թ. Նազարյանցը տեղափոխվում է Մոսկվա: Լազարյան ճեմարանում նա արժանանում է ջերմ ընդունելության՝ ստանձնելով պարսից և օտար լեզուների ու գրականության ամբիոնի վարիչի պաշտոնը:

Լազարյան ճեմարանում տիրապետող լեզուն գրաբարն էր: Լազարյաններն իրենք բացասական վերաբերմունք ունեին «ամնշակ և անկանոն աշխարհաբարի»՝ նկատմամբ և հովանավորում էին գրաբարի կողմնակիցներին: Նազարյանցը մոտիկից ծանոթանում է ճեմարանի և Մոսկվայի հայ գաղութի մտավորականների պահպանողական հայացքներին գրական լեզվի ձևավորման և նրա զարգացման հեռանկարների վերաբերյալ: Փաստորեն նա պետք է որոշակի դարձներ իր ձևակերպումները գրական նոր լեզվի վերաբերյալ: Ընմարանական գործունեության առաջին տարիներին Նազարյանցը մեծ դժվարությամբ 1851 թ. տպագրում է դեռևս 1846թ. գրած «Յաղագս փորձական յոգեբանութեան ճառ»՝ ձեռնարկը: Դա, ըստ էության, Նազարյանցի ոչ միայն հայերեն առաջին աշխատությունն էր, այլև հոգեբանության մասին հայերեն առաջին գիրքը:

1850 թ. Եփրեմ վարդապետ Ալթունյանին ուղղված նամակում Նազարյանցն այդ մասին ցավով ու ափսոսանքով գրել է. «Իմ շարադրութիւնս, հայոց լեզվում այդ առարկայի վերայ առաջինն է, մինչև այժմ այդ առարկայի վերայ խոսված չէ հայոց բառով, բայց ափսոս որ հին բառով, և սորա պատճառը կիմացվի յառաջաբանութիւնից, որի մեջ արիւն դառած արտիս ծովիցը մի երկու կաթիլ ածել ենք»¹:

Նույն նամակից տեղեկանում ենք, որ այս աշխատության ամենաարժեքավոր գաղափարներն ամփոփված են նրա առաջաբանում: Նազարյանցը հայտնում է, որ իր մատնանի կարևորությունը ամփոփված է ոչ այնքան հոգեբանության, որքան առաջաբանի մեջ, որի միջոցով հայերը պետք է տեղեկանան, թե ինչպես է «գերագույն բարգավաճման» հասել Եվրոպան:

Այստեղ Նազարյանցը շեշտում է հատկապես այն հանգամանքը, որ նոր ձևավորվող աշխարհաբար լեզուն պետք է դառնա լուսավորության կամուրջ ու ճանապարհ: Նույն նամակից իմանում ենք նաև, որ թեև հակաաղկորդները դեմ են իր սկզբունքներին, բայց, որպես ճշմարտության համար մարտնչող մարտիկի, իրեն համեմատում է վիրաբույժի հետ, որը, հանուն մարմնի առողջության, հատում կամ այրում է հիվանդ անդամը: «Վիրաբույժ բանագէտ, - գրում է նա, - հատույ սուր ի ձեռին կամ կարմրացուցեալ երկաթ յաջն՝ ոչ զկորուստ ախտացելոյն գիտէ. քաւ և մի լիցի, այս մին հատանէ, միւսն հարէ, բայց ողջամիտ խորհրդով և զհիվանդին փոկութիւն նկատելով: Վասն նեխեալ վիրացն մերոց պետք էին սրոյ և հրաշէլ երկաթոյ առ ի բաց հատանել և ի բաց հատել զապականեալս յանդամոց, զի մի բոլոր մարմինն անպիտանացեալ կորիցէ»²:

Իսկ այն հարցին, թե ինչու հայ լեզվի դպրության վերանորոգության մասին աշխատությունը գրված է գրաբարով և ոչ աշխարհաբարով, Նազարյանցը պատասխանում է, որ կամեցել է «հնամուրութեամբ ախտացեալ»-ներին ցույց տալ, որ ինքը նույնպես փայլուն

¹ Ստ. Նազարյան, Նամականի, Եր., 1969, էջ 153:

² Նույն տեղում, էջ 139:

գիտի «հայերի աննորոգելի հնութեամբ ժանգոտած լեզուն»³ և ցանկության դեպքում կարող է գրել նաև գրաբարով:

Լեոն իր «Ստեփանոս Նազարյանց» մենագրության մեջ ընդգծում է այն հանգամանքը, որ առաջադիմությունը թոփքներով չի կատարվում, որ «կախված ժամանակի ոգուց, նախապաշարունքներից միանգամից չեն ազատվել նաև մեր առաջին գրական գործիչները, այդ թվում «Գամառ—Բաթիպան» էլ գրաբար է գրել, լավ զգալով, որ դա չպիտի լինի իրենց լեզուն: Հետաքրքրական է, որ Միքայել Նալբանդյանն էլ գրել է մի գրաբար «Ճառ»՝ աշխարհաբար լեզվի առավելություններն ու իրավունքները ցույց տալու համար»⁴:

Նազարյանցը իր գրքի առաջաբանում պահանջում է ճանաչել և սիրել հայրենիքը ոչ թե անույ և սնտոի շատախոսությամբ, այլ «... կենդանի և ճշմարիտ արդեամբք, այն է՝ խոզողական մտօք քննելով զպիտոյս իւրոյ ազգի և փութոյ պնդութեամբ դարման մին մատուցանելով...»⁵:

Հաջորդ հարցը, որը հուզում էր Նազարյանցին, նոր լեզուն գրականությամբ ամրացնելու անհրաժեշտությունն էր:

Ժամանակաշրջանի այն մտավորականները, ովքեր մեծ հույսեր չէին կապում գրական նոր լեզվի համագոյաին ճանաչման հետ, գտնում էին, որ քանի դեռ ազգը չունի իր ժամանակակից գրավոր լեզուն, պետք է ազգային կրթության համար օգտագործել օտար լեզվով գրված դասագրքերը և գրականությունը: Նազարյանցը դեմ է այդ սկզբունքին, որովհետև կարծում է, որ եթե գիտության գրքերը հայերեն չեն, ապա մանուկներն օտարանում են, «վասն զի յորոյ ազգի լեզու մտածէ և խօսի ոք, ի համարի ասի լինել նորին իսկ ազգի, և լեզու է՝ որ զատանէ ազգ յազգէ, որպես դարձեալ նա է, որ կապակցէ զմարդիկ յազգ»⁶:

Հայ իրականության մեջ առաջինը իս. Աբովյանն էր, որ զգաց աշխարհաբարը գրականությամբ ամրացնելու անհրաժեշտությունը և հետևողական աշխատանք ծավալեց այդ լեզուն մշակելու և կատարելագործելու ուղղությամբ: Նա նշում էր, որ միակ միջոցը, որը հնարավորություն է տալիս մարդուն «մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին»⁷, լեզուն է, որը ժողովրդի առաջընթացի հետ փոփոխվում ու հղկվում է: Անհրաժեշտ է աշխարհաբարը դարձնել հայ նոր գրականության ու դպրոցական լեզու, ստեղծել այնպիսի երկեր, որոնք համապատասխանեն ժողովրդի ըմբռնողությանը և ազատեն նրան «հոգեկան խավարի ստրկական կապանքներից»⁸:

Նազարյանցը նույնպես գտնում էր, որ չհոգալ ազգային լեզվի և գրականության մասին նշանակում է անտարբերություն ցուցաբերել և մեծ վնասներ հասցնել ազգին. «...ի բառնիլ բանի և գրոյ՝ ազգն ևս որոյ իմանալի կենդանութիւն սերտ և կուռ կապեալ է ի դպրութիւն հարազատ՝ չմարթի կալ յակաստանի, այլ գլորեալ կործանի կործանումն անկանգնելի»⁹:

Քաղաքակիրթ բոլոր ժողովուրդների օրինակները ցույց են տալիս, որ հին լեզուները վաղուց են տեղը զիջել նորերին: Անհրաժեշտ է տեղ տալ նորին, և մեզ համար արդեն պարզ կլինի, որ «Արդարև չեն ինչ պետք մեծի ճարտարամտութեան և կորովատեսութեան առ ի խելամտեալ ճանաչել զանդարմանելի զայն վիհ ժամանակաց՝ որ խորոց ընդ մէջ անկեալ յետնոցս և առաջնոցն՝ անհնարինս ի միմեանց զմեզ տարանջատէ, որպեսզի հեշտին ևս իցն զմեռեալս յարուցանել ի գերեզմանաց, քան զբոլոր ազգ հայոց ի հնութիւն անդր վերածել»¹⁰:

³ Ստ. Նազարյան, Յաղագս փորձական յոգեբանութեան ճառ, Մ., 1851, էջ Ա:

⁴ Լեո, Երկեր, Բ. 6, 1987, էջ 63:

⁵ Ստ. Նազարյան, Յաղագս..., էջ Ա:

⁶ Նույն տեղում, էջ Բ:

⁷ Խ. Աբովյան, Նախաշավիղ, էջ XXXIX:

⁸ Նույն տեղում, էջ XLI:

⁹ Ստ. Նազարյան, Յաղագս..., էջ Բ:

¹⁰ Նույն տեղում, էջ Գ:

Նազարյանցն ընդգծում է, որ եթե յուրաքանչյուր հեղինակ իր մեջ լծորդի ճաշակավոր ընտրությունը, շրջանկատ հնարագիտությունը և աշխատանքի համբերատար տոկոսությունը, ապա անտեսված աշխարհաբարը կարող է «լուսատր մտքի խորհուրդները բացատրել»: Ուղեցույց ունենալով պատմությունը՝ Նազարյանցը ցույց է տալիս, որ բոլոր ժամանակներում և ամենուրեք ազգային առաջադիմությունը իրականացվել է մայրենի լեզվով:

Հին աշխարհի կրթության անկումը և հոռմեական կայսրության տարածքում ապրող տարալեզու ժողովուրդների միաձուլումը այնտեղ հանգեցրին ոչ պակաս գեղեցիկ լատիներենի արմատական փոփոխությունների: Դա նպաստեց նաև այս լեզվի բազայի վրա նոր ոտմանական լեզուների՝ ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի կազմավորմանը:

Իտալիայում մեծ Դանտեն, ըմբռնելով իր ժամանակի պահանջները, գիտակցելով, որ հիմն այլևս չի վերադառնալու, հրաժարվեց իր դարն ապրածից և ժողովրդի կենդանի լեզվով ստեղծեց «Աստվածային կատակերգությունը»... «այս գործ սքանչելարուեստ յորում՝ նկարագրի այլաբանաբար ուղևորութիւն ընդ դժոխս, ընդ քաւարան և ընդ երկինս պատկերացուցանելով զբովանդակ որպիսութիւն ժամանակին յորում եկաց բանաստեղծն»¹¹: Այն, ինչ կատարեց Դանտեն որպես «մախահայր իտալական տաղաչափաց», Անգլիայում կատարեցին Գոտֆրիդ Հաուսը, Օեքսպիրը, Վալտեր Սքոթը, Բայրոնը, Գերմանիայում՝ Լեսսինգը, Հերդերը, Օիլլերը, Գյոթեն: Նա հիշատակում է ուսերեն գրական նոր լեզվի զարգացման օրինակը, որը «օրըստօրէ հրահանգեալ բարգաւաճեցաւ ընդ հմուտ գրչաւ հեղինակաց որպիսին եղեն Լոմոնոսով, Դերժավին, Ֆօնվիզին, առականս խօսն խենցիցեր յաւուրս մեծի թագուհւոյն կատարինայ Բ., պատմագիրն կարամզին, բանաստեղծքն Կոիլով, Պոլշկին, Ժուկովսկին և այլն»¹²:

Մեր լեզվի զարգացումը ևս պետք է ընթանա այն ճանապարհով, ինչպես ընթացել են մյուս ժողովուրդների լեզուները. «Իմն մարթիցի տեսանել, թե հասարակաց են օրէնք ընթացից մարդկութեանս առ որ և է ազգս, յոր և է աշխարհս ուրեմն և Հայք իսկ չեն բացառութիւն ինչ յընդհանուր կանոն է անտի, այլ իբրև հարազատ անդամք միոյ միայնոյ ազգի մարդկան պարտին զնոյն զնալ ճանապարհ, ընդ որ բոլորն ընթացեալ տեսանի. ապա թէ ոչ իբրև փտեալ և անպիտանացեալ որդիս ժամանակի ի բաց հատեալ բոլորէն ծախսեցին ի ժանիս որկորամոլ ծերունոյն Կոռնոսի»¹³:

Նազարյանցը ոչ միայն գործնականորեն, այլև տեսականորեն հիմնավորում է նոր լեզվի անհրաժեշտությունը ժողովրդի կենցաղում, գրականության և ուսուցման մեջ: Նա այն կարծիքին է, որ թեև հին լեզուն գեղեցիկ է, ճոխ, ունի ամփոփ ոճ, իսկ նոր լեզուն պարզ է, անմշակ, այնուամենայնիվ պետք է ընդունել վերջինը, քանի որ գրաբարն արդեն անհասկանալի է ու մեռած:

Նազարյանցի համոզմամբ եվրոպական ազգերի նման մեզանում ևս աշխարհաբարը սկսել է զարգանալ անհամեմատ ավելի վաղ. դեռևս XI դարում նկատելի էին նրա առանձին տարրեր, բայց ճակատագրի բերումով չունեցավ իր բնականոն զարգացումը, «վասն զի բանալի նուիրական տաճարիդ այդորիկ անգիտ իմն կորուսեալ է նմա ի շրջապտոյտս յորձանուտ դարուս և ժամանակաց»¹⁴:

Այժմ ժամանակն է վեր հանել այդ տարրերը, վերածնել կենդանի լեզուն ժողովրդական բարբառների ակունքներից և սեփական լեզուն դարձնել միջնորդ հայ մանուկների լուսավորության համար, քանի որ օտար լեզվով երեխաներին ուսուցանելը կամ աշխարհաբարն արհամարհելը նույնն է, թե «սեփական կենդանությունը ուրանալով օտարի կենդանութեամբ ապրել ախորժել»: Միաժամանակ պետք է ունկնդրել ժամանակի ձայնին, ստեղծել մի հասկանալի լեզու՝ օգտագործելով գրաբարի ճոխ գանձերը և ժամանակակից բարբառները, հետզհետե այն մաքրել օտարաբանություններից և ճանապարհ բացել

¹¹ Նույն տեղում, էջ ԺԴ:

¹² Նույն տեղում, էջ Թ:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ ԺԲ:

ժողովրդի հոգևոր զարգացման համար. «...մեզ ասեմ Հայկազանցս պարտ էր՝ թեև անազան՝ պէտ յանձին ունիլ, փութալ ճեպել առ ի կազմել մեզ նոր և դիրքնկալ իմն լեզու դըպրութեան, քաջ տնտեսութեամբ մտաց ի գործ վարելով զճոխ նիւթսն մատակարարէ մեզ հին լեզուն և այլևայլ ընտիր բարբառք նորոյ ժողովրդեան, որով լիցի ապաքէն հետզհետե մաքրել զհասարակ լեզու Հայոցս յեկամուտ օտարաձայնութեանց, լցուցանել զպակասորդս նորին և քաջացուցանել զայն առ իրաքանչիւր հանդէսս ուսմանց»¹⁵:

Իսկ թե ինչպէս պետք է մշակել գրական նոր լեզուն, այս հարցում Նազարյանը պաշտպանում է այն տեսակետը, ըստ որի «Առաւել ընտիրն յաշխարհիկ բարբառս և մերձատրագոյնն հնոյ վճիտ հայախոսութեան ճանաչի բարբառն արարատեան՝ յոր հպատորին ըստ իմիք խոսուածք Հաշտրախանու Հայոց»¹⁶: Փաստորեն, Նազարյանը առաջիններից էր, որ, հրապարակային պայքարի մեջ մտնելով աշխարհաբարի դատի պաշտպանության համար, առաջադրեց արարատյան բարբառը հիմք ընդունելու գաղափարը:

Նազարյանցի ժամանակակից ու գաղափարակից Միքայել Նալբանդյանը, ըստ էության, այլ տեսակետ էր զարգացնում: Նրա համոզմամբ, «նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խափնելու, առանց գավառական բարբառների կամ օտար լեզուների ազդեցությանց ստրկանալու»¹⁷:

Ավելին, Նազարյանցն ու Նալբանդյանը տարբեր վերաբերմունք ունեին նաև աշխարհաբարի մեջ գրաբարը ներառելու հարցում: Եթե Նազարյանը գտնում էր, որ հնարավորինս պետք է օգտագործել գրաբարի ընձեռած հարստությունը, ապա Նալբանդյանը դեմ էր գրաբարի առջև աշխարհաբարի դռները լայնորեն բացելուն: «Անհրաժեշտ ենք համարում ասել, որ ստրկանալով հին լեզվին, առանց ժողովրդին ակամջ դնելու՝ լեզվի նոր ծլած ձևերը, որ դեռ թարմ են և կերպարանագործվելու վրա, կապելով և ճնշելով անցածի և մեռածի պատրանքի մեջ, նոր լեզվի մշակության գաղափարը ազգին համար դառնում է նույնպես ամուլ և անպտուղ, ինչպես հին և մեռած լեզվի գործածության գաղափարը»¹⁸:

Այսուհանդերձ, Նալբանդյանը նույնպես աշխարհաբարի մշակությունը չէր պատկերացնում առանց գրաբարի մասնակցության: Ինչ վերաբերում է բարբառներին, ապա, ի տարբերություն Նազարյանցի, արարատյան բարբառից բացի նա կարևորում էր նաև Պոլսի բարբառի հնարավորությունները: «Երկու գլխավոր բարբառները մեր լեզվի՝ Արարատյան և Կ.Պոլսի, լավ ու վատ գործ են կատարում, թող նոցա ներքին բազմամասն ճյուղավորվածությունը»¹⁹:

Առաջաբանի մի քանի էջեր Նազարյանը նվիրում է «Կովկաս» թերթի խմբագիր Սլիվիցկու՝ նույն թերթում տպագրված մի հոդվածի քննադատությանը:

Սլիվիցկին խոսում էր հայերեն հրատարակությունների մասին և դատողություններ անում համազգային լեզվի շուրջը: Նա գտնում էր, որ գրաբարը պետք է պահպանել իբրև համազգային լեզու: Ըստ Սլիվիցկու՝ գրաբարի զարգացման հետ էր կապված հայերի լուսավորությունը: Նա բերում է Կալկաթայի հայկական դպրոցի օրինակը, որի շնորհիվ Կալկաթայի հայերի բարձր դասի գործածական լեզուն գրաբարն է:

Անկախ այն բանից, թե որտեղ են բնակվում հայերը, նրանք երբեք չեն կորցնում իրենց ազգային բնավորությունը: Հայրենական գրողների գրական երկերի հանդէպ ունեցած սերը չի լքում անգամ վերջին առևտրականին նույնիսկ այն դեպքում, երբ նրա համեստ կրթությունը թույլ չի տալիս նրան կարդալու այդ ստեղծագործությունները: «Լսելով որևէ ստեղծագործության արժանիքների մասին, նրանք ձեռք են բերում այն և պահպանում: Այն հարցին, թե ինչ գիրք է սա, հայերը խորին ակնածանքով պատասխանում են. սա Մովսես Խորենացի է, սա Չամչյան է, սա Եղիշե է:

Այսպիսի անսահման կապվածությունը սեփական գրականության աստղերին

¹⁵ Նույն տեղում, էջ ԺԶ:

¹⁶ Նույն տեղում, էջ Ժ:

¹⁷ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 167:

¹⁸ Նույն տեղում, հ. 4, էջ 194:

¹⁹ Նույն տեղում, հ. 3, էջ 338:

պարզ խոսում է այն մասին, որ հայերի համար, ովքեր տեսել են դժբախտության անդարձ տարիներ, երբ կեղեքել են ժողովրդին և հաճախ ոչնչացրել ժողովրդական տաղանդի պտուղները, կգա կրթվածության դար»²⁰:

Նազարյանը կտրուկ և խիստ պատասխաններ է տալիս հակառակորդին, որը թերագնահատում էր հոգևոր արթնացում ապրող հայության մղումները. «Ինչ վերաբերում է հեղինակատանցի հայերին, այդ մի բուն գաղթականությունը չի կարող օրինակ դառնալ, քանզի պետք է հաւատալ Եվրոպական գիտութեան ապացուցած ճշմարտութիւններին և ոչ թէ Կալկաթայի հայերին. ովքեր են այն գիտնական մարդիկ, որոնց իբրև թէ պատրաստել է Կալկաթայի դպրոցը»²¹:

Այնուհետև նա անդրադառնում է հայերի գրասիրությանը, որտեղ ընդդիմանում է գրաբարականներին. «Ով տղայամիտ առնդ այդմիկ որ ի գովեստս գրէ Հայոց զպարծիլ սոցա յայն՝ զոր ունեին ոչ, վասն զի՝ զինչ օգուտ ի գեղեցկատիպ և ի վայելչակազմ մատենից շարելոց մի առ միտով՝ եթէ ամփոփեալքն ի ներքին մատենից անիմանալի են ունդացն, ուրեմն և անկարող իսկ են լինել ըստ իմիջ առիթ լուսատրութեան նստելոցն ի խաւարի»²²:

Անդրադառնալով հայերի վաճառականությանը՝ Նազարյանը դրա մեջ էլ հիացմունքի արժանի բան չի գտնում, ավելին՝ մերկացնում է հայոց վաճառական դասի պակասությունները, որ առաջ են գալիս տգիտությունից. «վաճառաշահութիւն ավելի նախատիւնք, քան փառք նկատելով հայկական անուան՝ նա վերջում մի անգամ ևս հայտնում է իր խորին համոզումը՝ ասելով. «Օտտ աւելի դիրին է լարուցանել զմեռեալս ի գերեզմանաց, քան թէ միջնորդութեամբ հնոյն լեզուի գնորն լուսատրել զժողովորդ. խաւարն լուսով փարստի և ոչ խաւարաւ, կեանք ի կենդանութենէ աղբերանայ և ոչ ի մեռելութենէ»²³:

Այսպիսով, ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Նանույանը, Ստ. Նազարյանցի «Յաղագս փորձական յոգեբանութեան ճառ» աշխատության առաջաբանը հրապարակ է գալիս իբրև 1850-ական թթ. արևելահայ գրական նոր լեզվի համար մղվելիք պայքարն ազդարարող դրոշ:

Այստեղից էլ բորբոքվում է նախորդ տասնամյակին արդեն սկսված վեճը ինչպես գրաբարի, այնպես էլ աշխարհաբարի մշակման ակունքների վերաբերյալ արևելահայ և արևմտահայ լուսավորիչների միջև²⁴:

1853 թ. լույս տեսավ Նազարյանցի հայերեն երկրորդ աշխատությունը, որը միևնույն ժամանակ նրա առաջին աշխարհաբար գրվածքն է՝ «Վարդապետարան կրօնի հասարակաց հայախոսութեամբ» վերնագրով:

«Վարդապետարան»-ի առաջաբանը ևս մի մարտահրավեր էր, բայց այս անգամ արդեն աշխարհաբար լեզվով: Այստեղ Նազարյանը նորից ու նորից անդրադառնում է ղեզվի անօթին: Մատնանշելով աշխարհաբար լեզուն, որ գիտության միջնորդ պիտի լինի հայերի համար, Նազարյանցն իր գործածած լեզվի առիթով գրում է. «Մեր նորախոս լեզուն չէ ոչ մի քաղաքի մասնավոր կամ առանձին բարբառ, այլ մոտավորապես՝ այն մաքուր և հստակ հայախոսութիւնը, որ լսվում է ազգի մեջ հարիրավոր լաւ խոսողների բերանից, ուր և գտնվեին նոցա»²⁵:

Հեղինակը պարտավոր է ազգային լեզվի խորքից «հանել, շինել, կազմել, հարմարել» այն ամենը, ինչ անհրաժեշտ է միտք և զգացողություն բացահայտելու համար: Իսկ այս ամենը հնարավոր է միայն մատենագրության լեզու դարձնելով աշխարհաբարը. «Մատենագրութենով կ'շխակի լեզուն, կ'ճոխանա ու կ'հաստատվի նա, լեզվի առաջադիմութենովը առաջադեմ կ'լինի և ազգային լուսավորութիւնը, բայց ազգային հարազատ

²⁰ Ստ. Նազարյանց, Յաղագս..., էջ ԺԸ:

²¹ Նույն տեղում, էջ ԺԹ:

²² Նույն տեղում, էջ ԺԹ:

²³ Նույն տեղում, էջ ԺԻ:

²⁴ Տե՛ս Ռ. Նանույան, Ստ. Նազարյանց, Եր., 1978, էջ 108:

²⁵ Ստ. Նազարյանց, Վարդապետարան կրօնի հասարակաց հայախոսութեամբ, Մ., 1853,

լուսավորութիւն՝ առանց բուն ազգային մատենագրութեան՝ սուտ բան է, անարմատ ծառ»²⁶:

Կյանքի ճշմարիտ արտացոլման շնորհիվ գրականությունը, ավելի քան մշակույթի ճյուղերից որևէ մեկը, ունենալով դաստիարակչական մեծ ուժ, խոր ազդեցություն է գործում ժողովրդի վրա: Բայց հայ հին գրականությունը և լեզուն գրեթե առնչություն չունեն ազգային նոր կեցության հետ: Այդ հին ձևը անհրաժեշտորեն պիտի վերածնվի ազգային նոր կեցությանը համապատասխան: Նազարյանը գտնում է, որ որքան էլ բարձր լինեն մեր հին մատենագիրները, չեն կարող իրենց տված սնունդով նոր սերնդին կապել ժամանակի հետ. «հին մատենագրութիւնը չէ կարող հոգեղեն սնունդ տալ մեր ժամանակի հային, ըստ որում չունի իր մեջ այն սննդատար միջոց և հիւթը, որ լցուցաներ նորա իմացական պիտոյքը և կարոտութիւնը»²⁷:

Ուրեմն ի՞նչ է անհրաժեշտ. անհրաժեշտ է եվրոպական գիտություն և արվեստ, որոնց «միջնորդութենովը կարողանային մեր տղայքը ծանոթանալ աշխարհի, բնության և մարդկության որպիսութեններին, ուրեմն նորանոր գաղափարներ ստանալ, սնանիլ և ճոխանալ այնպիսի տեղեկութիւններով, որ հոգեպէս և մարմնապէս պահպանիչ էին ազգի զուակներին, այդպիսի կենդանական և կենդանացուցիչ միջոց չկան հին մատենագրության մեջ»²⁸:

Կարևորելով լեզվի նշանակությունը որպէս ազգը բնութագրող կարևոր հատկանիշ՝ Նազարյանը գտնում է, որ եթե հայ երեխան օտարանում է, մեղավոր չէ. նա գիտություն չի ստանում իր լեզվով և մնում է ուրիշի հացին մուրացկան, քանի որ առանց վարելու, ցանելու ու սերմանելու հնարավոր չէ ոչինչ հավաքել ու հնձել. «Եթէ Հայոց զավակը տեսանելով՝ թե իր մայրենի լեզուն անհիւթ ու անծուծ է, բնական ուղիղ դատողութենով բաց է թողնում մեռելալը և ձեռք է գցում այն կենդանի և զորութիւն տվող միջոց, որ գտանվում է օտար լեզվի մեջ. եթե հայազգի զավակը չունենալով իր հայրենի պտղատու ծառը պարզում է ձեռքը դեպի օտարատունկ ծառը և նորա համեղ պտուղներովը հագեցուցանում է իր ստամոքսը, և այդպէս օտարի կերակրովը սնունդ առած սկսանում է և ինքը օտարանալ և այլազգայնանալ», և ապա զարմանալի պայծառությամբ Նազարյանը լուծում է լեզվի արժեքի հիմնական խնդիրը.

«Հայութիւն հրամայելով, հայութիւն պահանջելով ոչինչ բան չի առաջանա, մինչև հայոց հայրենասերքը պատվավոր և քաջալերական ասպարեզ չբանան հայոց զավակի առջևը, մինչև հաստատուն պատճառներ չկային մեջտեղումը՝ թե այն հայոց լեզուն, որ կուսաներ հայազգի մանուկը՝ լուսավորութեան ճանապարհ էր, հաց ու ջուր կտար, փառքի ու պատվի կհասուցաներ»²⁹ :

Նազարյանը իր այս ծրագրի իրագործմանը նվիրեց ամբողջ կյանքը՝ գրելով, թարգմանելով, բազմաթիվ հարձակումների ենթարկվելով: Նրա՝ գրական լեզվի մշակման ձևը տարբերվում էր այդ ժամանակաշրջանի բոլոր ուղղություններից: Այդ տարբերությունը Ս. Գալստյանը իրավամբ բնորոշում է հետևյալ կերպ. «Նախանազարյանական և նրա ժամանակակից ոչ մի հեղինակի մոտ գրական աշխարհաբարը որոշակի համակարգ չունի. այն խառն է, բարբառային՝ մեծ մասամբ մշակողի մայրենի բարբառի և գրաբարյան՝ հեղինակի համար նախընտրելի ձևերով: Նազարյանցի լեզուն, ընդհակառակը, սկզբից և եթե դրված է որոշակի համակարգի տակ»³⁰: Ժամանակի աշխարհաբարի տարրնթացությունների համեմատությամբ աշխարհաբարի մշակման և առանձնապէս բարբառայնությունից ազատ պահելու գործում դա անգնահատելի առաջադիմական քայլ էր:

²⁶ Նույն տեղում, էջ 7:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, էջ 8:

³⁰ Ս. Գալստյան, Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Եր., 1963, էջ 11:

Նազարյանցի «Յաղագս փորձական յոգեբանութեան ճառ»-ի և «Վարդապետարան կրօնի» աշխատությունների առաջաբաններում, այսպիսով, աշխարհաբարի խնդիրը քննված է հետևյալ տեսանկյուններից.

Գրաբարի և գրական մոր լեզվի փոխհարաբերության հարցում Նազարյանցը, ինչպես և Աբովյանը, Մ. Նալբանդյանը, մախապատվությունը տալիս է աշխարհաբարի՞ն ընդգծելով, որ այդ լեզուն պետք է դառնա լուսավորության կամուրջ և ճանապարհ:

Նազարյանցն առաջարկում է ամրապնդել մոր գրական լեզուն գրականության, մատենագրության մեջ, որը կնպաստի մոր ձևի և մոր բովանդակության ներդաշնակությանը:

Նա գտնում է, որ հայոց լեզվի զարգացումը պետք է ենթարկվի եվրոպական մյուս ժողովուրդների լեզուների զարգացման օրինաչափություններին:

Նազարյանցն ընդգծում է, որ պետք է մոր լեզուն հարստացնել թիմ հայերենի այնպիսի տարրերով, որոնք հասկանալի են ներկա սերնդին, իսկ մախապատվությունը տալիս է արարատյան բարբառին:

Л. В. ТУМАНЯН - Ст. Назарянц о литературном ашхарабаре. - В статье рассматриваются затронутые в работах С. Назарянца «Յաղագս փորձական յոգեբանութեան ճառ», «Վարդապետարան կրօնի» вопросы, касающиеся борьбы за обновление армянского языка, которая развернулась в армянской действительности в 50-70 гг. XIX века. В своих работах Назарянц рассматривает проблему нового армянского языка, являющегося важным фактором просвещения нации и считающимся основой формирования нового литературного языка.